Ե .

Մօտ իմ եարուն մի՛ նըստիլ, թէ հազար ես ինձ սիրելի.
Ինձի խիստ դըժուար կուգայ քանց հոգւոյս քակտիլն աւելի.
Այլում ալելում ասեմ, իսկի ճար մահուն չիլինի:

Զ .

Մըտիկ եարին արէք որ կ'ելնէր կանուխ ի քընուն.
Հանցկուն թոլումոլ կ'ելնէր զինչ մանուկն ելնէր ի գինուն.
Հագեր տուպարայ շապիքն ու կ'երթէր հովըն ծառերուն.
Շէկ ժամն ի հոսել առնէր, կու կաթէր քըրտինքն ուներուն:

Է .

Գանգատ մի կ'ուզեմ ասեմ, ես ասեմ լուսուն արեւուն.
Երբ սէր չես հաներ ի հուն, է՞ր հանես մանուկն յարեւուն:

Ը .

Իմ եարն ի Հոռմոց ի վեր ուղարկեր շատ արմաղաններ,
Թէ ինք ի ր նըման գըտեր, թող ազիզ արեւըս ապրի.
Մէկ մ'այլ երթամ ես սիրեմ, ղարակօզ 'ւ ինքըն նըման:
Զանունն այլվի իր դնեմ, երբ կանչեմ՝ սիրտըն նըւաղի:

Թ .

Ա՛յ իմ պըզըկից եարուկ, քո ամէն տեղիկդ աղեկուկ.
Քո ծոցն է ոսկի սընտուկ, ես ի մէ'ջըն ղարիպ կաքւուկ:
Ա՛յ իմ արծաթէ գուպայ, մարգարտէ ծածկոցն ի վըրայ,
Քո բունդ ի դըժար քարին, արծիւուն ահիկն ի վըրայ,
Չըլես ելումուտ էնես, թէ չասեն՝ Աղկէկ է նորա:

Ժ .

Հայրէն մի կամիմ ասել ի վերայ կարմիր խընծորին,
Ամառն ի ծառին ճուղին ու ձըմեռն ի մէջ շուկային.
Գային այն ճահիլ մանչերն, գընէին տան'ին սիրողին:
Սիրողն անօրէն լինէր, լուք կուտար ի ձեռքըն տըղին:
Տըղան այլ տըխմար լինէր, լուք դանակ քաշէր խընծորին,
Խընծորն երկու կէս անէր, մէկըն իր, մէկըն սիրողին: